ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12-ը հուլիսի 2016թ.

Քաջաան

# ՕՐԱԿԱՐԳ

**2016 թվականի հուլիսի 12-ին ժ.11$^{00}$-ին կայացած**

**ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի**

1. **Հանրային իրազեկման նպատակով մարզպետարանի ստորաբաժանումների և մարզի համայնքների հետ համագործակցված աշխատանքի ընթացքը**

/զեկ. Ա.Մելիքսեթյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ/

2. **Մարզի համայնքներում անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքների մասին**

/զեկ.Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

3. **ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական աշխատանքների մասին. Պետական աջակցության ծրագրերով մարզին հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի գումարների հավաքագրման ընթացքի մասին**

/զեկ.Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4. **Քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականության, արդյունավետության և ստուգման արդյունքների ամփոփում**

/զեկ.Մ.Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

5. **Հայաստանում հուղարկավորության մասին օրենքի կիրառումը մարզի համայնքներում**

/զեկ.Մ.Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

6. **Այլ հարցեր – Նոյեմբերյանի տարածաշրջանում համայնքների խոշորացման ծրագրի վերաբերյալ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**12.07.2016թ.** **ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:

Նիստին ներկա էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

## 1. Հանրային իրազեկման նպատակով մարզպետարանի ստորաբաժանումների և մարզի համայնքների հետ համագործակցված աշխատանքի ընթացքը

---

/զեկ. Ա.Մելիքսեթյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ ,,Տեղեկատվության ազատության,, մասին օրենքը այն հիմնական օրենքն է, որով կարգավորվում է ինչպես ՏԻՄ–երի, այնպես էլ պետական մյուս մարմինների և տեղեկատվություն տնօրինող այլ կազմակերպությունների հանրության առջև հաշվետու լինելու մեխանիզմները: Իհարկե, Տեղական ինքնակառավարման մասին օրենքը նույնպես պարունակում է տեղեկատվության ազատության և թափանցիկության բաղադրիչներ: Սակայն, ներկայացնեմ այն հիմնական սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդվեն պետական ՏԻՄ-երը՝ ապահովելով հանրային իրազեկումը: Ինչ է տեղեկությունը և ով է տեղեկատվություն տնօրինողը, սրանք շատ պարզ սահմանված են վերոհիշյալ օրենքով: Տեղեկությունը անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ/: Տեղեկություն տնօրինողների ցանկի մեջ նշված են նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Բացի այն, որ տեղեկատվություն տնօրինողը, այդ թվում ՏԻՄ-երը պարտավոր են տեղեկատվություն տրամադրել, եթե իրենց դիմել են դրա պահանջով և եթե դրա մերժման հիմքերը սահմանված չեն օրենքով, գոյություն ունի պարտադիր հրապարակման տեղեկատվություն, որը ՏԻՄ-երը պարտավոր են հրապարակել: Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով: ՏԱ մասին ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ

հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և կատարված փոփոխությունները.

1.հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
2. բյուջեները,
3.հաստիքացուցակները,
4.պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5. մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տրամադրման կարգը,
6. տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
7. հասարակական միջոցառումների ծրագրերը,
8. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
9. աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյաց ման կարգը, գները (սակագները),
10.տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
11.ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը եւ այլն:

Ի դեպ, պարտադիր եւ անհապաղ հրապարակման են ենթակա նաեւ կատարվող փոփոխությունները:

Հրապարակման միջոցներն ընտրում է ինքը մարմինը: Եթե հիշում եք, ժամանակին մենք աշխատեցինք համայնքների հետ և համատեղ տեղեկատվական ցուցատախտակներ տեղադրեցինք բավականին թվով համայնքներում, հատկապես գյուղերում կարելի է շարունակել օգտվել այդ ցուցատախտակների հնարավորություններից, սակայն հիմա ինտերնետն արդեն ավելի մեծ տարածում ունի և կարելի է օգտվել դրա հնարավորություններից: Եթե մարմինն ունի ինտերնետային կայք, ապա կայքում պարտադիր է դրանց տեղադրումը: Մեր համայնքներն, իհարկե բոլորը չունեն կայք, սակայն քաղաքային համայնքներն ունեն: Թարմացրեք Ձեր կայքերը պարբերաբար՝ հատկապես ուշադրություն դարձնելով վերոհիշյալ ցանկում զետեղված պարտադիր տեղեկատվության հրապարակմանը: Անհրաժեշտության դեպքում մարզպետարանը պատրաստ է աշխատել Ձեր աշխատակազմի հետ՝ տրամադրելով անհրաժեշտ մեթոդական ցուցումներ:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն:

## 2. Մարզի համայնքներում անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքների մասին

/զեկ.Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2016թ. փետրվարի 14-ին ՀՀ Տավուշի մարզի խոշորացված Դիլիջան համայնքում /ընդգրկվել են նաև Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան համայնքները/ անցկացվել են համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ: Քվեարկությունը կազմակերպելու և ընտրողների ձայները հաշվելու նպատակով կազմակերպվել են 19 ընտրական տեղամասեր՝ Կենտրոնական Ընտրական

Հանձնաժողովի կողմից սահմանված հերթական համարակալմամբ: Բոլոր տեղամասային կենտրոնները կազմավորվել են ՀՀ Ընտրական օրենսգրքի 16 հոդվածի պահանջներին համապատասխան: Դրանք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին նախապատրաստվել են ընտրությունները բնականոն ընթացքով անցկացնելու համար, ապահովվել են անհրաժեշտ գույքով ու պարագաներով:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 42 հոդվածի համաձայն բոլոր տեղամասերում, սահմանված կարգով, կազմավորվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Բոլոր տեղամասերում գործել է վստահված անձանց ինստիտուտը, իսկ ընտրությունների ընթացքին հետևել են դիտորդներ ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, որոնց առաքելությունը խոչընդոտող ոչ մի փաստ չի արձանագրվել:

Մեծ ծանրաբեռնվածությամբ ու բարձր պատասխանատվությամբ են աշխատել ոստիկանության Դիլիջանի բաժնի անձնագրային սեղանն ու նախկին գյուղապետարանների աշխատակիցները, որոնց համագործակցության արդյունքում կազմվել են առավելագույնս ճշտված ընտրացուցակներ: Դրանց նախնական օրինակները ժամանակին սահմանված վայրերում, բոլորի համար տեսանելի տեղերում, փակցվել են: Նկատված անճշտությունների ու բացթողումների վերաբերյալ դիմումները ժամանակին քննարկվել և ընթացք են ստացել, իսկ ընտրությունից 2 օր առաջ ընտրացուցակների վերջնական օրինակները փակցվել են տեղամասային կենտրոններում:

Ինչպես ընտրական հանձնաժողովները, այնպես էլ տեղերում իշխանության ներկայացուցիչները սերտ համագործակցության մեջ են եղել ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների հետ, որոնց պարտաճանաչ ու օպերատիվ գործունեության շնորհիվ ապահովվել է ընտրությունների բնականոն ընթացքը և ընտրական հանձնաժողովների անկաշկանդ աշխատանքը:

Հաշվառված 20475 ընտրողներից ընտրություններին մասնակցել են 11645-ը:

Ավագանու անդամության 32 թեկնածուներից ընտրվել են առավելագույն քվեներ ստացած 15 հոգի:

Համայնքի ղեկավարի երկու թեկնածուներից Ժորա Սահաբալյանի օգտին քվեարկել է 4353 ընտրող, իսկ Արմեն Սանթրոսյանի օգտին՝ 6797 ընտրող, որն էլ թիվ 41 ԸԸՀ որոշմամբ ճանաչվել է հաղթող: 388 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

Կարող ենք փաստել, որ Դիլիջանում ՏԻՄ ընտրություններն անցել են կազմակերպված, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ թե դիտորդների, թե վստահված անձանց կողմից խախտումներ չեն արձանագրվել: Եղել են քիչ թվով անճշտություններ, որոնք վերջնական արդյունքների վրա որևէ ազդեցություն չէին կարող գործել:

2016թ. ,,Վարչատարածքային բաժանման մասին,, ՀՀ օրենքի 1-ին հոդվածում կատարվել է փոփոխություն, ըստ որի ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում ձևավորվել է 3 համայնք:

Խոշորացվել են Արճիս, Լճկածոր, Այրում, Հաղթանակ, Պտղավան, Դեղձավան, Բագրատաշեն և Դեբեդավան համայնքները՝ կենտրոնը Այրում քաղաք:

Զորական և Կողբ համայնքները՝ կենտրոնը Կողբ գյուղ:

Բերդավան, Դովեղ, Նոյեմբերյան, Ջուջևան, Բաղանիս, Ոսկեպար, Ոսկևան, Կոթի և Բարեկամավան համայնքները՝ կենտրոնը Նոյեմբերյան քաղաքը:

ՀՀ Տավուշի մարզպետի 06.07.2016թ. թիվ 94-Ա որոշմամբ 2016թ. սեպտեմբերի 18-ին մարզի համայնքներում կայանալու են ՏԻՄ հերթական ընտրություններ:

Ավարտելով իր զեկույցը, Մ.Մխիթարյանը հույս հայտնեց, որ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ամբողջ ժամանակաշրջանը կանցնի կազմակերպված և ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

**3. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական աշխատանքների մասին. Պետական աջակցության ծրագրերով մարզին հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի գումարների հավաքագրման ընթացքի մասին**

---

/զեկ.Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա,

որից՝

վարելահող -25588.4 հա
բազմամյա տնկարկներ – 1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ -1198.1հա,
պտղատու այգիներ -704.1 հա
խոտհարքներ – 9401.3 հա
արոտավայրեր – 63065.6 հա
այլ – 10805.4 հա
Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան
բազմամյա տնկարկներ – 2030.8 հա ,որից՝
խաղողի այգիներ -158.9հա,
պտղատու այգիներ -1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2016թ. ցանքի տակ է դրվել 16519 հա կամ 90 % / +101 հա նախորդ տարվա համեմատ/:

/կցվում է տեղեկատվությունը/:

Մարզի համայնքներում սկսվել են բերքահավաքի աշխատանքները.

11.07.2016թ. դրությամբ օպերատիվ տվյալներով արտադրվել է.

Բանջարեղեն –140 տոննա

Կարտոֆիլ – 120 տոննա

Պտուղ – 650 տոննա

Խոտ - 10000 տոննա

Կատարվել է 800 հա արտհունձ,որից՝

Աշնանացան գարի- 463 հա

Աշնանացան ցորեն – 337 հա:

Մարզում, չնայած վերջին տարիներին տարբեր ծրագրերով նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերմանը, դեռևս հիմնախնդիր է մնում գյուղատնտեսական մեքենաների՝ հատկապես հացահատիկահավաք կոմբայնների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը: Փաստաթղթերով առկա 66 հացահատիկահավաք կոմբայնից սարքին է 36-ը, աշխատում է 23-ը:

2015թ.աշնանը մարզի 38 համայնքի տրամադրվել է 515 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու /նախորդ տարվա 457 տոննայի դիմաց/՝ 2016 թ. բերքահավաքից հետո 1 կգ-ի համար 160 դրամ վճարելու պայմանով: Սերմացուն տրամադրվել է 2107 հողօգտագործողի,որոնց կողմից կատարվել է 1717 հա աշնանացան:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի թիվ 59-Ն, թիվ 73-Ն և փետրվարի 2-ի թիվ 74-Ն որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզին հատկացվել է.

Գարնանացան գարու սերմացու -15 տոննա /գումարը վճարվել և իրացվել է ամբողջությամբ/,

առվույտի սերմացու - 2 տոննա / իրացվել է 656 կգ, վճարվել է 946500 դրամ,պարտքը՝ 37500 դրամ/:

ազոտական պարարտանյութ - 420 տոննա/ 12.07.2016թ.դրությամբ իրացվել է 386.8տոննա,/ վճարվել է 44մլն.134700 դրամ,պարտքը՝ 2մլն.281000 դրամ/:

ֆոսֆորական պարարտանյութ -5 տոննա/ վճարվել և իրացվել է 2.2 տոննա/

կալիումական պարարտանյութ - 5 տոննա/ վճարվել և իրացվել է 2.45 տոննա/

դիզելային վառելանյութ - 400000 լիտր / 12.07.2016թ.դրությամբ իրացվել է 162391լիտր/:

Մարզի որոշ գյուղացիական տնտեսությունների կողմից 2012-2014թթ. տրամադրված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց դեռևս չեն վճարվել համապատասխան գումարները,այդ թվում.

2012թ. աշնանը տրամադրված 255 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի համար նախատեսված 40 մլն.800 հազար դրամի դիմաց 12.07.2016թ. դրությամբ հավաքագրվել է 35մլն. 687 հազար 500 դրամ, պարտքը կազմում է 5 մլն. 112 հազար 500դրամ:

2013թ.աշնանը տրամադրված 457 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի համար նախատեսված 56 մլն.դրամի դիմաց 12.07.2016թ. դրությամբ հավաքագրվել է 35մլն.9 հազար 600 դրամ, պարտքը կազմում է 20 մլն. 990 հազար 400 դրամ:

2014թ.աշնանը տրամադրված 457 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի համար նախատեսված 73 մլն.120 հազար դրամի դիմաց 12.07.2016թ. դրությամբ հավաքագրվել է 33 մլն. 899 հազար 800 դրամ, պարտքը կազմում է 39 մլն. 220 հազար 200 դրամ /կցվում են տեղեկատվությունները/:

Սկսվել է նաև 2015թ. աշնանը տրամադրված 515 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց գումարների հավաքագրումը /այն նախատեսված է 2016թ.բերքահավաքից հետո/: 12.07.2016թ. դրությամբ հավաքագրվել է 2 մլն. 900 հազար դրամ:

Ընթացքի մեջ են գումարների հավաքագրման և վճարման աշխատանքները:

Այժմ ճշտվում է համայնքներում 2016թ.աշնանացանի համար ցորենի առաջին վերարտադրության սերմացուի պահանջարկը: 1 տարվա ընդմիջումից հետո այս տարի մարզի Բերդի տարածաշրջանի 3 համայնքի/ Բերդ,Արծվաբերդ,Նավուր/ 31 հա-ի վրա կրկին կիրականացվի սերմարտադրություն՝ 2016թ.տրամադրվելիք 9.3 տոննա էլիտային սերմացուի դիմաց 2017թ.բերքահավաքից հետո կրկնակին՝ 18.6 տոննա ցորենի առաջին վերարտադրության սերմացու պետությանը հետ վերադարձնելու պայմանով:

Մոնիտորինգի արդյունքներով 2016թ. մարզի 18 համայնքների հատկացվել է 366 կգ <<Ռոդիֆակում Ս>> մկնասպան պատրաստուկ առավել վարակված 4575 հա-ի վրա պայքարի աշխատանքներ կատարելու համար: Պայքարի աշխատանքներն ավարտվել են,

հաշվետվությունը պահանջվող ձևաչափով ներկայացվել է ՀՀ գյուղնախարարություն /կցվում է տեղեկատվությունը/:

Մարզի համայնքներում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնագլխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

| Անվանումը | 2016 | 2015թ. | +/- |
|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր | 37624 | 37064 | +560 |
| այդ թվում՝ կովեր | 17606 | 17504 | +102 |
| Խոզեր | 20069 | 16564 | +3505 |
| Ոչխարներ և այծեր | 17508 | 16910 | +598 |
| Մեղվաընտանիքներ | 21819 | 21757 | +62 |
| Թռչուններ | 207698 | 211061 | -3363 |

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:

Ինչպես 2015թ., 2016թ. ևս պետպատվերի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվելու կենդանիների 11 հիվանդությունների դեմ:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

Մինչև 2015թ. ծրագրում ընդգրկված 13 համայնքներում ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ,որոնց կողմից ձեռք են բերվել համապատասխան գյուղմեքենաներ և գյուղգործիքներ,կատարվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման աշխատանքներ:

2015թ.ծրագրում ընդգրկվեցին և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին ևս 12 համայնքներում /Վարագավան, Վ.Ծաղկավան, Տավուշ, Արծվաբերդ, Չինարի, Մովսես, Իծաքար, Ն.Կ.Աղբյուր,Բերդ,Նորաշեն,Կոթի, Կողբ/, իսկ 2016թ.՝ Դիտավան համայնքում:

Նշված համայնքների արոտավայրեր և խոտհարքներ տանող ճանապարհների վրա կատարվել են փոսալցումներ, կառուցվել են խմոցներ:

Ընթացքի մեջ են կոոպերատիվների կողմից գյուղմեքենաների և գյուղգործիքների ձեռք բերման աշխատանքները:

Այժմ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են տարվում Դիլիջան համայնքի Աղավնավանք,Խաչարձան և Հովք բնակավայրերում ևս նման կոոպերատիվներ ստեղծելու ուղղությամբ:

Մարզում տոհմաբուծարաններ չկան, իսկ արհեստական սերմնավորման կայանը լուծարվել է: <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում 2015թ. մարզի Բերդ համայնքում սկսվել և 2016թ. շահագործման է հանձնվել <<Տավուշի մարզի անասնաբուժական կենտրոնը>>: Կենտրոնը իրականացնելու է նաև կենդանիների արհեստական սերմնավորում:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում որպես տոհմային կորիզ բուծվում են Եվրոպայից ներկրված <<Սիմենթալ>>,<<Ջերսեյ>> ցեղերի խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մատղաշները անասնապահական համալիրում կառուցված հորթանոցում պահվում են խմբակային կարգով: Որպես մայրացու էգ հորթերը տրամադրվել են Կիրանց, Նավուր, Արծվաբերդ/2015թ./, Գանձաքար/2015թ./, Գոշ/2015թ./ համայնքներում ստեղծված կոոպերատիվներին, որոնց ստացիոնար պահվածքը իրականացվում է <<ՀիմնաՏավուշ>> զարգացման հիմնադրամի կողմից կառուցված մինի-ֆերմաներում:

2016թ.ավարտվել են Կողբի մինի- ֆերմայի կառուցման աշխատանքները: Ստեղծված կոոպերատիվին, որը կազմված է 7 անդամից, մայիսին տրամադրվել են 15 գլուխ երինջներ:

Բարեկամավան համայնքում ևս մինի-ֆերմայի հիմնման աշխատանքները ավարտվել են 2016թ.: Հաշվի առնելով, որ համայնքը չունի բավարար անասնակերի և խոտի բազա ուստի 5 հոգուց բաղկացած կոոպերատիվին տրամադրվել է 23 մայրացու խոզ, 1 վարազ, 20 խոճկոր: Կոոպերատիվին տրամադրվել է նաև մոտ 5 տոննա կեր:

Մարզի գյուղացիական տնտեսությունների ցանքատարածություններին, բազմամյա տնկարկներին և խոտհարքներին լուրջ վնաս են պատճառում կարկտահարությունները, հեղեղումները և այլ բնական աղետները:

2016թ.մայիսի 6-24-ն ընկած ժամանակահատվածում մարզի տարածքում տեղացած կարկտահարությունից 11 համայնքների 1104 հա ցանքատարածություններին և բազմամյա տնկարկներին պատճառված վնասը կազմել է 223 մլն.617000 դրամ, իսկ հունիսի 6-10-ն ընկած ժամանակահատվածում 7 համայնքների 1951 հա ցանքատարածություններին, բազմամյա տնկարկներին և խոտհարքներին՝ 348մլն.254000դրամ:

Մարզպետարանի կողմից կազմված ամփոփ ակտերը սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և ՀՀ գյուղատնտեսության նախարարություններ:

ՀՀ կառավարության 02.07.2015թ.թիվ 766-Ն որոշմամբ մարզին հատկացված 28մլն. դրամով Նոյեմբերյանի տարածաշրջանի 6 համայնքներում /Արճիս-2 հատ, Լճկաձոր-1 հատ, Պտղավան-2 հատ, Հաղթանակ-2 հատ, Բերդավան-2 հատ,Կողբ-1 հատ/ տեղադրվել են 10 հատ հակակարկտային կայաններ:

Տավուշի մարզում հակակարկտային կայանների տեղադրման համապատասխան ծրագիր մշակելու և իրականացնելու խնդրանքով դիմել ենք ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

**<u>Հանձնարարվեց.</u>**

**ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության**

**և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին.**

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել բերքահավաքի և արտհնձի ընթացքը, համայնքների ղեկավարներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն:

**<u>Առաջարկվեց.</u>**

**Մարզի համայնքների ղեկավարներին.**

Ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ՝ 2012-2014թթ. հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի գումարների հավաքագրման գործընթացն ավարտելու ուղղությամբ:

**4. Քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականության, արդյունավետության և ստուգման արդյունքների ամփոփում**

---

/զեկ.Մ.Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ստուգման ընթացքում պարզվել է հետևյալը.

Կառուցապատման նպատակով հողահատկացումների համապատասխանությունը ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ դրանց փոփոխության կամ բացակայության դեպքում ՀՀ կառավարության 30.07.1998թ. թիվ 479, 29.12.2011թ. թիվ 1918-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 և 29.12.05թ.թիվ 2404-Ն որոշումների պահանջներին ՀՀ Տավուշի մարզի թվով 62 համայնքներից գլխավոր հատակագծեր ունեն միայն Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ քաղաքները և Հաղարծին համայնքը: Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզի թվով 62 համայնքներից հողային ֆոնդի նպատակային նշանակության փոփոխության, հողհատկացման, տարածքների գործառնական նշանակության փոփոխությունների և ՃՀԱ-երի ու նախագծերի համաձայնեցման վերաբերյալ ՀՀ Տավուշի մարզպետարան են ներկայացվել թվով 19 առաջարկություններ, այդ թվում, Դիլիջանից՝ թվով 5, Իջևանից թվով 3, 1-ական, Այրումից, Կողբից, Գանձաքարից, Ոսկեվանից, Աչաջուրից և Թեղուտից Հաղթանակից, Բագրատաշենից և Ազատամուտից՝ 2-ական, Աճարկուտից, Պտղավանից և Ջորականից՝ մեկական: Վարչական հսկողության լրացված հարցաշարերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ շատ դեպքերում արձանագրված չեն տրամադրված ՃՀԱ-երի քանակական տվյալներն ու գործառույթի հետ առնչվող խախտումների մանրամասները: Վարչական հսկողության հարցաշարերում բերված են միայն ՃՀԱ-երի տրամադրման գործառույթի հետ կապված ընդհանրացված ամփոփ գնահատականներ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքների (ՃՀԱ) առկայությունը և դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.08.02թ. թիվ 1473-Ն որոշման պահանջներին ՀՀ Տավուշի մարզպետարանում տեսչական ստուգման ենթակա 2014 թվականն ընդգրկող

ժամանակահատվածում մարզի Դեբեդավան, Դեղձավան, Արճիս, Բարեկամավան, Ջուջևան և Հովք համայնքներում, իսկ 2016 թվականն ընդգրկող ժամանակահատվածում՝ Դիտավան, Խաշթառակ, Աղավնավանք, Հաղարծին, Թեղուտ, Նոյեմբերյան, Այրում, Բաղանիս, Դիլիջան, Ոսկեվան, Կոթի և Վերին Ծաղկավան համայնքներում քաղաքաշինության ոլորտում գործունեության նկատմամբ մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արձանագրություններից պարզվում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքներ (ՃՀԱ-եր) տրամադրվել գրեթե բոլոր համայնքներում՝ բացառությամբ Հովք, Ոսկեվան, Կոթի և Վերին Ծաղկավան համայնքների: Համաձայն վարչական հսկողություն արձանագրությունների՝ ՃՀԱ-երը տրամադրվել են սահմանված կարգին համապատասխան:

Շենքերի ու շինությունների նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 21.12.98թ. թիվ 812 որոշման կատարման ընթացքը.

Մարզպետարանի կողմից մարզի համայնքներում անցկացված վարչական հսկողություն համապատասխան հարցաշարերի արձանագրություններից պարզվում է, որ տեսչական ստուգման ենթակա 2015 թվականն ընդգրկող ժամանակահատվածում համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը, ըստ կիրառված գրառմամբ ձևակերպման, ունեցել են բավարար մակարդակ:

Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը ՀՀ կառավարության 28.10.98թ. թիվ 660 որոշման պահանջների համաձայն ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկում կատարելու անհրաժեշտություն չի առաջացել: Համաձայն քաղաքաշինության ոլորտում գործունեության նկատմամբ մարզպետարանի կողմից մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողություն համապատասխան հարցաշարերիում կատարված արձանագրությունների, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման անհրաժեշտություն առաջանալու դեպքում իրազեկումներն իրականացվել են սահմանված կարգին համապատասխան: Սակայն, ամփոփ գրառումների մեջ չեն նշվել կատարված իրազեկումների քանակական տվյալներն ու իրազեկման գործառույթի իրականացման հետ առնչվող մանրամասները:

Շինարարության (քանդման)թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.02թ. թիվ 91 որոշման պահանջներին ստուգման ենթակա ժամանակահատվածում՝ 2015 թվականի սեպտեմբերի 7-ի դրությամբ, ՀՀ Տավուշի մարզպետարանը մարզի համայնքներից իրազեկվել է թվով 48 շինարարության թույլտվությանների մասին: 48 շինարարության թույլտվությանների պատճեններ, այդ թվում, Իջևանից՝ թվով 20, Դիլիջանից՝ թվով 18 և ընդամենը 10 շինարարության թույլտվությանների պատճեններ՝ գյուղական համայնքներից ամբողջությամբ:

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.03թ.թիվ 626-Ն որոշման պահանջներին ստուգման ենթակա ժամանակահատվածում՝ 2015 թվականի սեպտեմբերի 7-ի դրությամբ, ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի պատճեններ մարզի համայնքներից ՀՀ Տավուշի մարզպետարան են ներկայացվել թվով 8 ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի պատճեններ:

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի պատճենները սահմանված կարգով մարզպետարան չուղարկելու փաստը, որպես 11 սահմանված կարգի խախտում, հարցաշարերում արձանագրվել է: Հարցաշարերում չեն արտահայտվել նաև ավարտված շինարարության շահագործման վարչական հսկողություն իրականացված համայնքների քաղաքաշինության ոլորտում գործունեության վերաբերյալ լրացված հարցաշարերի արդյունքների հիման վրա կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք սահմանված կարգով հրապարակվել ՀՀ Տավուշի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Մարզպետարանը վարչական հսկողության և ընթացիկ գործունեության արդյունքում արձանագրել է մարզի համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեությանն առնչվող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով կայացված որոշումների դեպքեր: Վարչական հսկողության գործընթացը ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից մարզի համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 771 և 77 հոդվածները, ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.28, 1.37, 1.38 կետերը և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «Վարչական հսկողության 2014 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասինե թիվ 159-Ա հրամանով՝ ՀՀ Տավուշի մարզպետի կողմից կայացվել են մարզի համայնքներում 2014 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում վարչական հսկողություն իրականացնելու մասին 2014 թվականի մարտի 3-ի թիվ 31-Ա, ապրիլի 27-ի թիվ 42-Ա և հուլիսի 15-ի թիվ 92-Ա որոշումները համապատասխանաբար: Նշված որոշումներով ստեղծվել են վարչական հսկողության իրականացնող աշխատանքայինխմբեր: Քաղաքաշինության ոլորտում վարչական հսկողություն իրականացնելու մասին ՀՀ Տավուշի մարզի համայնքներում քաղաքաշինության ոլորտում գործունեության նկատմամբ իրականացված վարչական հսկողության լրացված հարցաշարերի 12 պատասխաններում արտահայտված են քաղաքաշինական գործառույթների քանակական տվյալներն ու գործառույթների իրականացման հետ առնչվող խախտումների մանրամասները:

Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանն առնչվող այլ գործընթացներ. Ստուգման ենթակա ժամանակահատվածում մարզի տարածքում իրականացված ինքնակամ և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերի ու շինարարական նորմերի խախտումներով իրականացված շինարարության դեպքերի, ինչպես նաև դրանց կասեցման, կանխարգելման ու հետևանքների վերացման ուղղությամբ ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից գործառույթներ չեն իրականացվել:

**7. Հայաստանում հուղարկավորության մասին օրենքի կիրառումը մարզի համայնքներում**

---

/զեկ.Մ.Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

Զեկուցողը նշեց, որ գերեզմանատները շահագործող կազմակերպությունների ստեղծման, գերեզմանատների չափագրաման, վկայականների տրման, գլխավոր հատակագծերի մշակման գործընթացը չի կիրառվում մարզի համայնքներում: Համայնքներում չկան շահագործող կազմակերպություններ, չեն կատարվում գերեզմանատների չափագրման, գույքագրման, վկայականների տրամադրման աշխատանքները: Նոր գերեզմանատեղերի համար հատկացման որև սխեմա չի մշակվել:

Մարզպետի կողմից առաջարկություն ներկայացվեց խնդիրը պատասխանատուների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկելու և կոնկրետ հանձնարարություններ տալու համար:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ